ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 37-Ա

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը

*Դալար համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 13 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Դալար համայնքի 2020թվականի «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: 2. Արարատի մարզի Դալարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020թվականի համար հաստատելու մասին: 3. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին: 4. Համայնքի սեփականություն ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: 5. Արարատի մարզի Դալար համայնքի 2020թվականի տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասին: 6. Արարատի մարզի Դալար համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 38-Ա

## ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել «Դալար համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված Դալար համայնքի
ավագանու 2019թ. դեկտեմբերի 30-ի
թիվ 38-Ա որոշման

ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. «ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 18

| Հ/Հ | Հաստիքիանվանումը | Հաստիքային միավորը | Աշխ.թիվը | Ընդամենը ՀՀԴՐԱՄ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 1 | 146000 | 146000 |
| 2 | Մանկապարտեզի դաստիարակ | 2.5 | 5 | 145502 | 363755 |
| 3 | Մանկավարժ դաստիարակ | 0.55 | 1 | 145502 | 80026 |
| 4 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 1 | 145500 | 72751 |
| 5 | Հաշվապահ - գործավար | 1 | 1 | 77904 | 77904 |
| 6 | Գանձապահ - տնտեսվար | 1 | 1 | 72751 | 72751 |
| 7 | Խոհարար | 1 | 1 | 75000 | 75000 |
| 8 | Խոհարարիօգնական օժ.բանվոր | 1 | 1 | 72751 | 72751 |
| 9 | Լվացքարար | 1 | 1 | 72751 | 72751 |
| 10 | Մանկապարտեզիդայակ | 2 | 2 | 72751 | 145502 |
| 11 | Պահակգիշերային | 1 | 1 | 72751 | 72751 |
| 12 | Դռնապահ | 1 | 1 | 72751 | 72751 |
| 13 | Պարտիզպան-ցերեկային պահակ | 1 | 1 | 72751 | 72751 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 14.55 | 18 | X | 1397444. |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 39-Ա

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով

*համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել 2020 թվականի համար Դալարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ կողմ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ կողմ

ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Հաստատված Արարատի մարզի
Դալար համայնքի ավագանու
30.12.2019թ. թիվ 39-Ա
որոշմամբ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թիվը-15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորները | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | | | |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 161 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 150 000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 3 | Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 178 000 |
| 4 | Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 161 000 |
| 5 | Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ 3.1-2/ | 2 | 145000 |
| 6 | Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 143000 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| 7 | Գեղմասվար | 1 | 100000 |
| 8 | Գրադարանավար | 1 | 77000 |
| 9 | Գործավար | 1 | 112000 |
| 10 | Օպերատոր | 1 | 120000 |
| 11 | Անասնաբույժ | 0.5 | 112000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 12 | Պահակ | 1 | 112000 |
| 13 | Հավաքարար | 1 | 100000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 13,5 | x |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 40-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

*համայնքի ավագանին որոշում է.*

Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 41-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետի պահանջներով

*համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը համաձայն N 1 հավելվածի և դուրս գրման ենթակա գույքի ցուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1.

Դալարի համայնքի ավագանու

2019թ. դեկտեմբերի 30-ի թիվ 41-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

Դալար համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2019 թվականի գույքագրման

| անվանումը, համառոտ բնութագիրը | կառուցման տարեթիվը | քանակը | արժեքը/դրամ/ |
|---|---|---|---|
| 1. Համայնքապետարանի շենք | 1972թ | 1 | 16291000 |
| 2. Մանկապարտեզի շենք | 1988թ. | 1 | 82025000 |
| 3. Կուլտուրայի տան շենք | 1982թ. | 1 | 111993000 |
| 4. Պարիսպ հողամասով ֆերմայում | 1958թ | 1 | 2904000 |
| 5. Հուշարձան քարից | 1958թ. | 1 | 4171 |
| 6. Գազի մագիստրալ | 1979թ. | 1 | 286000 |
| 7. Գազի մագիստրալ | 2004թ. | 1 | 684000 |
| 8. Գազի մագիստրալ 252,01 երկ. | 2006թ. | 1 | 936000 |
| 9. Սիլոսի աշտարակ | 1950թ. | 1 | 1776 |
| 10. № 2 կովանոցի տանիքը | 1958թ. | 1 | 318 |
| 11. Բակի ցանկապատ/պարիսպ/հողամասով | 1956թ. | 1 | 789000 |
| 12. Արտեզյան ջրհոր №1 | 1966թ. | 1 | 100000 |
| 13. Արտեզյան ջրհոր №2 | 1967թ. | 1 | 128000 |
| 14. Արտեզյան ջրհոր №3 | 1980թ. | 1 | 258000 |
| 15. Արտեզյան ջրհոր №4 | 1996թ. | 1 | 683000 |
| 16. Պահակատուն քարից | 1955թ. | 1 | 862 |
| 17. Ավտոգարաժներ քարից | 1955թ. | 1 | 493441 |
| 18. Տրակտորի գարաժ և պահեստներ | 1978թ. | 12 | 1252403 |
| 19. Դաշտայինպահակակետեր | 1961թ. | 4 | 1415 |
| 20. Գյուղ. Գործիքների ծածկ (նավես ) | 1966թ. | 1 | 739181 |
| 21. Բուժկետի շենք | 1955թ. | 1 | 2383000 |
| 22. Խմելուջրիջրագիծ 1 | 2004թ. | 1 | 2985000 |
| 23. Խմելուջրիջրագիծ 2 | 2005թ. | 1 | 432000 |
| 24. Գրասենյակ. Կահույքի հավաքածու /մեծ գրասեղան, փոքր սեղան, փոքր պահարան/ | 2007թ. | 1 | 198000 |
| 25. Պրինտեր MF 4010 (երեքը մեկում) | 2008թ. | 1 | 39000 |
| 26. Ջեռուցմանհամակարգ (Մերկուրի) գյուղապետ. շենքում | 2008թ. | 1 | 340000 |

| | | | |
|---|---|---|---|
| 27.Համակարգիչ /պրոցեսոր, տպիչ/lexmark250/, մոնիտոր, ստեղնաշար/ | 2008թ. | 1 | 66000 |
| 28. Խորքային պոմպ ,, Մերկուրի,, N5 | 2008թ. | 1 | 3563000 |
| 29. Փափուկ կահույքի հավաքածու | 2010թ. | 1 | 162000 |
| 30. Օդորակիչ << Հիտաչի>>ME14HZ | 2012թ. | 2 | 353000 |
| 31.Պահարան | 2013թ. | 2 | 95000 |
| 32.Համակարգիչ G 540/2գր/50գր գու 210PHILIPS 19 (պրոցեսոր, մոնիտոր, ստեղնաշար) | 2013թ. | 1 | 90000 |
| 33. ՏպիչHP Lasher JET2014 | 2007թ. | 1 | 21000 |
| 34. UPS ( Mercury) | 2013թ. | 2 | 18000 |
| 35.Արտաքինէլեկտրական լուսավորության ցանց 2014թ (27 սյուն) | | 1 | 3259000 |
| 36. UPS Էլկուտակիչ | 2014թ. | 1 | 16000 |
| 37. Գրասեղան | 2014թ. | 1 | 59000 |
| 38. Մոնիտոր | 2014թ. | 1 | 38000 |
| 49.Տպիչ HP-1010 | 2014թ. | 1 | 19000 |
| 40. Համակարգիչ/պրոցեսոր, ստեղնաշար/ | 2014թ | 1 | 65000 |
| 41. Գազի մագիստրալ/114մ/ | 2015թ. | 1 | 852000 |
| 42. Պահարան | 2016թ. | 2 | 160000 |
| 43. Պահարան սպասքի | 2016թ. | 1 | 50000 |
| 44. Բազկաթոռ տնօրենի | 2016թ. | 1 | 95000 |
| 45. Սեղան հեռուստացույցի | 2016թ. | 1 | 46000 |
| 46. Տրանսպորտային կանգառ | 17.07.17թ. | 2 | 903085 |
| 47. Ավտոմեքենա NISSAN X-TRAIL | 30.10.17թ. | 1 | 4400000 |
| 48. Հեռուստացույց "sony" | 16.11. 17թ. | 1 | 200000 |
| 49. Սառնարան "AFTRON" | 16.11.17թ. | 1 | 200000. |
| 50. Ջրի դիսպենսոր "Vikass" | 16.11. 17թ. | 1 | 60000 |
| 521 Գրասենյակային աթոռ | 16.11.17թ. | 10 | 140000 |
| 52.Ավտոմեք-ի գազի սարքավ. բալոնով 23.12.17թ. | | 1 | 265000 |
| 53. Վ. Սարգսյանփողոցի գազիմագիստրալ 25.12. 17թ. | | 1 | 950000 |
| 54. Նոթբուք/ASUS/N5415 | 26.12.18թ. | 1 | 198000 |
| 55 Համակարգիչ/Digital/ /պրոցեսոր, մոնիտոր, ստեղնաշար, 2 հատ դինամիկ/ | 26.12.18թ. | 1 | 80000 |
| 56. Հոսանքի կուտակիչ/UPS/ | | 1 | 28000 |
| 57. Հոսանքի կարգավորիչ/ստաբիլիզատոր/STAR-500w | | 1 | 17800 |
| 58. Վ. Սարգսյան, Պ. Սևակ, Գ. Նժդեհի փողոցների արտաքին էլ. լուսավորության ցանց/25հենասյուն/ | 26.12.18թ. | 1 | 3163000 |
| 59. Բազմաֆունկցիոնալ տպիչ սամսունգ 4300, 14.11.19թ. | | 1 | 65000 |
| 60. Ճանապարհային ցուցանակներ 25.12.19թ. | | 6 | 378000 |
| 61. Ծ. Ազնավուր և Վ. Սարգսյան փողոցների էլ. լուսավորության ցանց, 19.16.19թ. | | 1 | 959500 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | 94 | 246981952/երկու հարյուր քառասունվեց միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր հիսուներկու/ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 2.
Դալար համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 30-ի
թիվ 41-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Դալար համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2019թվականի դուրս գրման

| անվանումը, տարեթիվը | քանակը | արժեքը/դրամ/ | համառոտ բնութագիրը |
|---|---|---|---|
| 1. Կոլտնտեսության գրասենյակի շենք 1937թ | 1 | 529000 | |

Ընդամենը՝ 1 - 529000/հինգ հարյուր քսանինը հազար/ ՀՀ դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 42-Ն

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

*համայնքի ավագանին որոշում է*

1. Սահմանել Դալար համայնքում տեղական տուրքերի 2020 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500(յոթ հազար հինգ հարյուր) 22 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000(տասնհինգ հազար) ՀՀ դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ,

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 (քսանհինգհազար) ՀՀ դրամ,

-3000 ս վելի քառակուսի

Մետր՝ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500(հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500(հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և

դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500(երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ. 5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ . 6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ. 7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2100 (երկու հազար հարյուր) ՀՀ դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3060 (երեք հազար վաթսուն) ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4020 (չորս հազար քսան) ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6060(վեց հազար վաթսուն) ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 8400 (ութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13800(տասներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2400(երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3120(երեք հազար հարյուր քսան) ՀՀ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4080(չորս հազար ութսուն) ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակլերպմանդ եպքում՝ 6120(վեց հազար հարյուր քսան) ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12060 (տասներկու հազար վաթսուն) ՀՀ դրամ, - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14520 (տասնչորս հազար չորս հազար հինգ հարյուր քսան), ՀՀ դրամ. 8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի

կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 105 (հարյուր հինգ) ՀՀ դրամ՝ մեկքառակուսի մետրի համար. 9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ ա. առևտրի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, դ. խաղատների համար՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ե. շահումով խաղերի համար՝ 125 000 (հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, զ. Վիճակախաղերի համար՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, 10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ ա. հիմնական շինությունների ներսում՝ - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000(հինգ հազար) ՀՀ դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 (յոթ հազար) ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000(ինը հազար) ՀՀ դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000(տասնմեկ հազար) ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000(տասնվեց հազար) ՀՀ դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 (երեք հարյուր) ՀՀ դրամ, -26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ, - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 (երկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000(ինըհազար) ՀՀ դրամ. 11)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 (հազար) ՀՀ դրամ, բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750(հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, գ.սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) ՀՀ դրամ, դ.այլ արտաքին գովազդի համար՝ 750(յոթհարյուր հիսուն) ՀՀ դրամ, ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով, զ.եթե արտաքին և գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով. 12) համայնքի խորհրդանիշները (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ. 13)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5 000 (հինգ հազար) ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ:

15) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տաս հազար ՀՀ դրամ

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազար ՀՀ դրամ,

2. Սույն որոշման 1-ին կետի 7-8 ենթակետում կիրառված է 0.3 գործակիցը, իսկ մնացած ենթակետերում, բացառությամբ 4-5 ենթակետերի սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0,5 գործակցի կիրառմամբ:

**3. Սահմանել Դալար համայնքում տեղական վճարների 2020թվականի հետևյալ դրույքաչափերը՝.**

1) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝

1 000 (հազար) ՀՀ դրամ.

2) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ ա. Կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

-ամսական 100(հարյուր) ՀՀ դրամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 ՀՀ դրամ. գ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 3 000 (երեք հազար) ՀՀ դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ.

դ. առևտրի(այդ թվում շուկաների) հանրային սննդի ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝

1 քառ. մետրը 50 (հիսուն) ՀՀ դրամ,

ե. հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝

1 քառ. մետրը 20 (քսան) ՀՀ դրամ,

զ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քառ.մետրը 5 (հինգ) ՀՀ դրամ,

է. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քառ. մետրը 3 (երեք) ՀՀ դրամ.

3) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ մեկ երեխայի հաշվարկով համայնքի բնակիչներին 4000 (չորս հազար) ՀՀ դրամ, այլ համայնքի բնակիչներին՝ 10000/տասը հազար/ ՀՀ դրամ:

4) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար տեղական վճարը մեկ փաստաթղթի համար՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ.

5) համայնքը սպասարկող անասնաբույժի ծառայություններից օգտվելու համար՝

**1.**Կենդանիների հիվանդությունների բուժման ,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500 ՀՀ դրամ

2. Ծննդօգնություն՝

1.թեթև միջամտություն - 1000 ՀՀդրամ

2. ծանր միջամտություն - 5000 ՀՀ դրամ

3. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլնմուշառում կախված կենդանու տեսակից /բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական - 100 ՀՀ դրամ/մանր. Կենդ./ -200 ՀՀ դրամ/ խոշոր ծրագրում ընդգրկված հակաճնասնահամաճարակային միջոցառումների/ կենդ./
4. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝
- 200 ՀՀ դրամ
5. Ախտահանություն՝
-1 քառ. մետր 200 ՀՀ դրամ
6. միջատազերծում /դեզինսեկցիա/
- 1քառ. մետր 100 ՀՀ դրամ
7. Կրծողների ոչնչացում /դերատիզացիա /՝
- 1 քառ. մետր 200 ՀՀ դրամ
8. Արհեստական սերմնավորում՝
-5000 ՀՀ դրամ
9. Կենդանու հերձում՝
- 1000 ՀՀ դրամ /մանր կենդ./
-3000 ՀՀ դրամ /խոշոր կենդ./
10. Կենդանու բուժում/յուր. այցելություն/
-1000 ՀՀ դրամ
11. Կենդանիների նախասպանդային/հետսպանդային/ զննում՝
–1000 ՀՀ դրամ /մանր կենդ./
- 2000 ՀՀ դրամ /խոշոր կենդ./:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
ՄԵԶԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 43-Ա

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով,

*համայնքի ավագանին որոշում է.*

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի 2020թ. բյուջեի ցուցանիշներն են. Դալար համայնքի բյուջեով նախատեսվում է 90830,1 հազ. դրամի եկամուտներ: Այդ թվում ՝ վարչական բյուջեով ՝ 66752.0 հազ դրամ 1. Հողի հարկ 5260,0 հազ. դրամ 2. Գույքահարկ շենք- շինություններից 470,0 հազ. դրամ 3. Գույքահարկ փոխադրամիջոցից 12300,0հազ. դրամ 4. Տեղական տուրքեր 441,52հազ.դրամ որից՝ ժամը 24:00-ից հետո 50,0 հազ. դրամ ծխախոտի վաճառքի թույլտվություն 102,720 հազ.դրամ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն 88,8 հազ.դրամ սեղմված բն. գազի վաճառքի թույլտվություն 200,0 հազ.դրամ 5.Պաշտոնային դրամաշնորհ (դոտացիա) 43676.2հազ.դրամ 6. Մուտքեր ծնողական գումարներից 1000,0 հազ. դրամ 7. Մուտքեր աղբահանության վճարներից 2160,0 հազ. դրամ 8. Համայնքի հողի վարձակալությունից մուտքեր 907.5հազ.դրամ 9. Այլ գույքի վարձակալությունից մուտքեր 536,78 հազ.դրամ Ֆոնդային բյուջեով նախատեսվում է 24081,1 հազ. դրամի եկամուտներ 1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ - 7535,7 հազ դրամ մնացորդի մուտքեր 2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի 16545,4 հազ դրամ ազատ մնացորդ 2020թ. համայնքի վարչական բյուջեով նախատեսվում է 66752,0հազ. դրամ՝ ծախսային պլան: Այդ թվում՝ 1. կառավարման (01.01.01.51) մարմնի պահպանման ՝ 31500,0հազար դրամ, որից. 1.1 Աշխատավարձ (4111 հոդ.) 25300.0 հազ.դրամ 1.2 Պարգևատրում (4112 հոդ.) 2096,0 հազ.դրամ 1.3Բանկային ծառ. ծախս. (4211հոդ.) 38.0 հազ.դրամ 1.4 Էներգետիկ

հոդ.) 36,0 հազ.դրամ 1.6Հեռախոս, կապ,թերթեր (4214հոդ.) 300,0 հազ.դրամ 1.7 Ավտոմ. Պարտադիր ապահով. (4215հոդ.) 40,0 հազ.դրամ 1.8.Տրանսպ. միջոց. վարձակալ. (4216հոդ.) 200,0 հազ.դրամ 1.9Համակարգչ. ծրագր. ծառ (4232հոդ.) - 200,0 հազ.դրամ 1.10 Աուդիտորական ծախսեր(4235հոդ.) 100,0 հազ.դրամ 1.11Մասն. ծառ.(4241 հոդ.) 200,0 հազ.դրամ 1.12Շենքերի և կառույց. ընթացիկ նոր.(4251հոդ.) 300,0 հազ.դրամ 1.13Տրանսպ. միջ ընթացիկ նորոգում (4252 հոդ.) - 70,0 հազ.դրամ 1.14 Տրանսպ. պլնյութեր (4264 հոդ.) 1300,0 հազ.դրամ 1.15 Գրասենյակային ապրանքներ և 300,0 հազ.դրամ տպիչ նյութեր (4261հոդ .) 1.16Մաքրող նյութեր, հիգ . պարագաներ և տնտ . ապրանքներ (4267 հոդ.) 350,0 հազ.դրամ,1.17 պարտադիր վճարներ /4823 հոդ/ 100.0 դրամ

2.Նախադպրոցական կրթության ոլորտում (09.01.01.51) նախատեսված է 1680,0 հազ. դրամի ծախս: Այդ թվում՝ 2.1 Աշխատավարձ (4111 հոդ.) 12000,0 հազ.դրամ 2.2 Էներգետիկ ծախսեր (4212 հոդ.) 220,0 հազ.դրամ 2.3 Կոմունալ ծախս և դեռատիզացիա (4213հոդ.) 80,0 հազ.դրամ 2.4 Տրանսպորտի վարձակալ (4216 հոդ.) 100,0 հազ.դրամ 2.5 Մասնագիտական ծառ. (4241հոդ.) 50,0 հազ.դրամ 2.6 Գրասենյակային պիտույքներ (4261 հոդ.) 40,0հազ.դրամ

2.7 Սննդամթերք, մաքրող նյութեր և հիգիենիկ պարագաներ (4267 հոդ.) 3900.0հազ. դրամ 2.. Հատուկ նպ. նյութեր /խաղալիքներ/(4269 հոդ.) 200,0 հազ.դրամ 2.9 Տնտ. ապրանքներ (4267 հոդ.) և շինանյութեր 610,0 հազ.դրամ

3. Հանրակրթական ուսուցում ծրագրի (09.02.02.51) 4639 հոդվածով նմխատեսվում է 200.0 հազ. դրամի դրամաշնորհ Դալարի միջն. Դպրոց ՊՈԱԿ-ին:

4.Աղբահանման և սանմաքրման ծրագրի (05.01.01.51) 4213 հոդվածով նախատեսվում է աղբահանության և մաքրման աշխատանքներ 2400,0 հազ. դրամ:

5.Մշակութային միջոցառումների կազմ. ծրագրով (08.02.04.51.) նախատեսվում է 1300,0 հազ. դրամի ծախսեր: Այդ թվում ՝ 5.1 4239 հոդվածով տոնական օրերի միջոց. կազմ. ծախս.600,0 հազ. դրամի, և 5.2 4269 հոդվածով 1100,0 հազ. դրամի նվերների գնման համար:

6. Թատերական ներկայացումներ ծրագրի (08.02.05.52.) նախատեսվում է 4239 հոդվածով 150,0 հազ. դրամի ներկայացումների տոմսերի գնման համար:

7. անասնաբուժական ծառայություններ / 04.02.01.51./ ծրագրի 4241 հոդ նախատեսվում է 672.0 դրամի ծախս անասնաբույժի վարձարելու նպատակով:

8.Գույքի նկատմամբ իրավունքի գրանցման և տեղեկատվության տրամադրման (01.06.01.51.) ծրագրով նախատեսվում 200.0 դրամի ծախս , այդ թվում 8.1 4241 հոդվածով նախատեսվում է 74,0 հազ. դրամի մասնագիտական ծառայության գումար, 8.2 4819 հոդվածով ՝ 126 .0 հազ.դրամի նվիրատվության գումար Հայաստանի համայնքների միությանը : 9. Փողոցների արտաքին լուսավորում ծրագրով (06.04.01.52.) նախատեսվում է2350 հազար դրամի ծախս, այդ թվում 9.1 4212 հոդվածով 1100.0 հազ. դրամի էլեկտրաէներգիայի, 9.2 4251 հոդվածով 900 .0

հազ. դրամի կառույցների ընթացիկ վերանորոգման ծախսեր և 4241 հոդվածով 350.0 անանօրյա լույսերի և զարդարանքների մատուցված ծառայության համար:

10 Շրջակա միջավայրի պահպանության ծրագրի(05.04.01.55.) 4239 հոդվածով նախատեսվում է 100,0 հազ. դրամի ծախս հակակարկտային կայանի լիցքավորման նպատակով: 11. Մասնագիտական բժշկական ծրագրի (07.02.01.51.) 4639 հոդվածով նախատեսվում է 100.0 հազ. դրամի դրամաշնորհ պետ. ոչ. առևտրային կազմակերպություններին (Դալարի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ին) :

12. Հասարակական կազմ. Աջակցություն ծրագրի (10.07.01.55.) 4819 հոդվածով նախատեսվում է 160,0 հազ. դրամի նվիրատվություն հասարակական կազմակերպություններին :

13. Սոց. անապահով ընտանիքների տոնական օրերի աջակցություն ծրագրի (10.07.01.53.) 4729 հոդվածով նախատեսվում է 600.0 հազ. դրամի այլ նպաստ:

14. Սոց. անապահով անձանց աջակցություն ծրագրի (10.07.01.54.) նախատեսվում է 3870.0 հազ. դրամի ծախս , այդ թվում 14.1 հուղարկավորության նպաստ 4726 հոդվածով , նախատեսվում է 1000.0 հազ. դրամի , 14.2 այլ նպաստ 4729 հոդվածով 250,0 հազ. դրամ և 14.3 4239 հոդվածով ծաղկեպսակների պատրաստում և այլ ծառայությունների մատուցում 370.0 հազ դրամ:

15. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրի 4727 հոդվածով նախատեսվում է 300,0 հազ. դրամ ծախս:

16. Պահուստային ֆոնդի (11.01.02.51.) 4891 հոդվածով նախատեսվում է 5650 .0 հազ. դրամի պահուստային միջոցներ: Ավագանին որոշում է հաստատել 2019թ.-ի համայնքի վարչական բյուջեի եկամտային մասը 66752.0 հազ. դրամ և ծախսային մասը 66752.0 հազ. դրամ :

Համայնքի ֆոնդային բյուջեով 2020թ. -ի տարեկան ծախսը նախատեսվում է 24081.1 հազ. դրամի. Այդ թվում՝

17.Գյուղամիջյան փողոցների հարթեցում և վերանորոգումծրագրով նախատեսվում է 7345.0 հազ դրամի, այդ թվում 17.1 5113 հոդվածով 980.0հազ.դրամ, 17.2 5112 հոդվածով 6000.0հազ. դրամ 17.3 5134 հոդվածով 365 .0 հազ. դրամի :

18. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով / 06.06.01.55./ նախատեսվում է 4615.0 հազ. դրամ ծախս , այդ թվում ՝ 18.1 5112 հոդվածով 2600.0.0 հազ. դրամի հատկացում ոռոգման ցանցի կառուցման 10 տոկոսի չափով ֆինանսավորման նպատակով, 18.2 5134 հոդվածով 1045.0 հազ. դրամ նախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման և ,18.3 5112 հոդվածով 970.0 հազար դրամի ցամաքուրդի ինտիգրի և հարթեցման ծախսեր:

19 . Համայնքապետարանի շենքի նոր տանիքի կառուցում 5112 հոդվածով 2800.0 հազ. դրամ

20.Գյուղամիջյան փողոցների արտաքին լուսավորության ցանցի մոնտաժում՝ 5112 հոդվածով 990,0 հազ. դրամ հոդված 5134- 50.0 հազ. դրամ

21. Վարչական սարքավ. ձեռքբերում հոդված 5122 500,0հազ. դրամ

22. Վարչական շենքի պատուհանների և դռների ձեռք բերում՝ 5110 300.0 հազ դրամ:

23. Համայնքային մշակութային և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով / 08. 02.03.51./ նախատեսվում է 1030.0 հազ. դրամի ծախս, այդ թվում '23.1 5112 հոդվածավ 980.0 հազ. դրամի, 23.2 5134 հոդվածով 50.0 հազար դրամի:

24. Համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման աշխատանքների իրականացման համար 5134 հոդվածով նախատեսվում է 2851.1 հազար դրամի ծախս:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամտային մասը կազմում է 24081.1 հազ. դրամ և ծախսայինի մասը՝ 24081,1 հազ. դրամ:. Համայնքի 2020թ. –ի բյուջեն ընդամենը եկամտային մասով կազմում է 90833,1 հազ. դրամ և ծախսային մասով՝ 90833.1 հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՌ ՊԵՏՐՈՍՅԱՆ